ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 23-ին Հայաստանի աշխատավորությունը նշեց ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի ծննդյան 75-ամյակը։

Երևանի Ճարտարապետների տանը կայացած երեկոյին հավաքվել էին նրա աշակերտները, նկարիչներ, դիմանկաններ, ուսանողներ։ Կարդացվեց զեկուցում ճարտարապետի կյանքի և գործունեության մասին, ինչպես նաև պատմվեցին հետաքրքիր հուշեր։

Անգնահատելի են Ալեքսանդր Թամանյանի մատուցած ծառայությունները հայ ճարտարապետության զարգացման գործին։ Նուրբ ճաշակով օժտված այն գեղարվեստագետներից է եղել նա, որոնք չափազանց մեծ խստապահանջություն են ցուցաբերել դեպի իրենց ստեղծագործական աշխատանքը։

1904 թվականին ավարտելով Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիային կից Գեղարվեստական բարձրագույն ուսումնարանի ճարտարապետության դասարանը, նա արդեն իսկ ցուցաբերում է մեծ ընդունակություններ նկարչության և ճարտարապետության ասպարեզում։ Շչերբակովի տան նախագծման ու շինարարության համար նա ոսկե մեդալ ստացավ Մոսկվայի լավագույն շենքի համար կազմակերպված կոնկուրսում, իսկ 1914 թվականին նույն շենքի համար և արվեստի ասպարեզում ունեցած մեծ հաջողություններ համար Գեղարվեստի ակադեմիան նրան ընտրում է ճարտարապետության ակադեմիկոս։

Սակայն Ալեքսանդր Թամանյանի ստեղծագործությունը իր ծաղկման գագաթնակետին հասավ 1920 թվականին Հայաստան տեղափոխվելուց հետո։ Ուսումնասիրելով և բարոյապես ըմբռնելով հայ ճարտարապետության բնորոշ գծերն ու գեղեցկությունները, նա մեծ վարպետությամբ կարողացավ հիմքը դնել ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական սովետահայ ճարտարապետության։ Նրա ստեղծագործությունների գլուխ-գործոցը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Կառավարական տունն է, որի ճարտարապետական բարդ և վեհ կոմպոզիցիան, ձևերի գեղեցիկ համադրումն ու տպավորիչ քանդակազարդությունը ստեղծել են հայկական ճարտարապետության լավագույն ավանդույթների վրա խարսխված մի հոյակապ կոթող։ Կառավարական տան նշանակությունը նրանումն է, որ նա մի տեսակ ճարտարապետության դպրոց հանդիսացավ երիտասարդ սերնդից լավագույն ճարտարապետներ պատրաստելու գործում։

Թամանյանի ստեղծագործության պսակներից մեկն էլ Օպերայի և բալետի թատրոնի շենքն է։ Այդ շենքի ճարտարապետական կառուցվածքի հիասքանչ դասական պատրաստությունը, ներդաշնակությունը, փառահեղությունը հանդիսանում են տաղանդավոր ճարտարապետի ստեղծագործական մտքի փայլուն հաղթանակը։ Այդ շենքը մեր գեղեցիկ մայրաքաղաքի չքնաղ զարդն է, սովետահայ ճարտարապետության մեծագույն նվաճումներից մեկը։

Թամանյանի հարուստ ժառանգությունը չի ավարտվում վերոհիշյալներով։ Երևան քաղաքի վերակառուցման և զարգացման գլխավոր նախագիծը նրա տաղանդի արգասիքն է, որը ճիշտ է լուծել արագորեն վերափոխվող մայրաքաղաքի արդյունաբերական շինարարության պլանաչափ տեղաբաշխումը։

Ակադեմիկոս Թամանյանի ճարտարապետական ստեղծագործական ժառանգությունը մեծ ավանդ է սովետահայ ճարտարապետության գանձարանում։